Կարևոր է իմանալ, որ ՌԴ-ում շտապ բժշկական օգնության ծառայություն տրամադրվում է յուրաքանչյուր անձի՝ անկախ քաղաքացիությունից:

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ և ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ծննդաբերությունը ՌԴ-ում կարող է անվճար լինել յուրաքանչյուր կնոջ համար: Սակայն հղիության ընթացքի վերահսկողությունը և ծննդաբերության նախապատրաստումը չեն մտնում շտապ օգնության ծառայության մեջ, ուստի չեն կարող տրամադրվել անվճար՝ առանց ՌԴ քաղաքացիություն ունենալու:

Դուք կարող եք ձեռք բերել հատուկ ապահովագրություն, որի մեջ մտնում է հղիության ընթացքի վերահսկողություն: Շատ կորևոր է՝ հղիության ընթացքում հետազոտվել բժշկի մոտ փոխանակման քարտ ստանալու համար. այն Ձեզ անհրաժեշտ կլինի ծննդատանը:

ՄԻԱՎ և ՍԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՅԼ ՀԻՎՆԱԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԱՎ-ով կամ այլ վտանգավոր վիրուսներով չվարակվելու, ինչպես նաև անցանկալի հղիությունից խուսափելու համար կարևոր է պահպանակ օգտագործել յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ: Պահպանակ կարելի է գնել ցանկացած դեղատնից կամ սուպերմարկետից:

ՌԴ-ում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստ կարելի է հանձնել անվճար և անանուն: Թեստավորման վայրի և այլ մանրամասների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին՝

+7 967 079-71-45
+7 915 452-83-92
+7 910 000-55-18

«Քայլ դեպի առողջություն»

Եթե ձեզ մոտ բացահայտվի ՄԻԱՎ վարակ, խորհրդատուն կպատմի ինչ պետք է անել նման դեպքում:

ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀՂԻՈՒԹՅՈՒՆ

ՌԴ-ում կինն ինքը կարող է որոշել, պահպանի արդյոք հղիությունը: Եթե դուք հղիացել եք, անպայման դիմեք բժշկի (անկախ նրանից, կորոշեք պահպանել թե ընդհատել հղիությունը): Ձեր առողջության պահպանման և հետագայում երեխա ունենալու հնարավորության համար հղիության ընդհատումը պետք է կատարվի բացառապես բժշկական հաստատությունում՝ հետևելով բժշկի խորհուրդներին: Մի կատարեք ոչ մի միջամտություն ինքնուրույն կամ ընտանիքի կամ ծանոթների խորհուրդներով:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Եթե դուք ենթարկվել եք ընտանեկան բռնության (օրինակ՝ դուք ծեծի եք ենթարկվել ձեր ամուսնու կամ ընտանիքի մեկ այլ անդամի կողմից), կարող եք զանգահարել միգրանտների աջակցման անվճար ծառայություն (աշխատանքային օրերին Մոսկվայի ժամանակով 10-ից 17-ը, ՌԴ տարածքում անվճար և անանուն)

+7 800 250-65-08

կամ կարող եք գրել՝
sos@silsila.help.
էլ հասցեին:

Ձեզ կներկայացնեն, թե ինչ կարելի է անել ձեր անվտանգությունն ապահովելու համար:

Իրավական օգնության կոնտակտներ

whatsapp/viber/telegram
(անվճար, շուրջօրյա):

+7 903 148-96-36,
+7 926 834-76-02

Էլ.հասցե
chupikvv@tong-jahoni.org

Региональная экспертная группа по здоровью мигрантов

ԴՈՒՔ ՄԻԳՐԱՆՏ ԿԻՆ Ե՞Ք ՌԴ-ՈՒՄ: ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՀՊԱՆԵՔ ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ: